#ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻՀԵՏ

Հրաշալի հնարավորություն երիտասարդների համար համատեղելու տեսական և գործնական գիտելիքները՝ հետագայում մեր թիմը համալրելու հեռանկարով:

#ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻՀԵՏ	
Ծրագրի տևողություն՝	2,5 ամիս
Ծրագրի անցկացման վայր՝	ք. Երևան
Ծրագրի մեկնարկ՝	Հուլիսի 22, 2019թ.
Հայտարարության սկիզբ՝	Հունիսի 4, 2019թ.
Հայտարարության ավարտ՝	Հունիսի 16, 2019թ.

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Յուրաքանչյուր երիտասարդի առաջնային մտահոգությունը աշխատաշուկայի պահանջներին բավարարող աշխատանքային փորձի ձեռքբերումն է: Փորձի կուտակումը պետք է սկսել դեռևս ուսումնառության ժամանակ:
IDBank-ի #ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻՀԵՏ ծրագրի շրջանակում երիտասարդները հնարավորություն կունենան կիրառել իրենց գիտելիքները վաճառքի, սպասարկման ոլորտում, ինչպես նաև ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ բանկային գործում: **Ծրագրի ավարտին իրականացվելու է ատեստավորում, որի արդյունքներով լավագույնները կշարունակեն իրենց կարիերան IDBank-ի հետ:**

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է՝

- լինել բակալավրի 4-րդ կամ մագիստրատուրայի ուսանող կամ վերջին 5 տարիներին ավարտած և անփորձ երիտասարդ,
- ունենալ լավ առաջադիմություն,
- ունենալ տնտեսագիտական/ֆինանսական մասնագիտացում,
- տիրապետել օտար լեզուներին /ռուսերեն, անգլերեն/,
- ունենալ հաղորդակցման գերազանց հմտություններ,
- և ամենակարևորը՝ լինել նախաձեռնող, ստեղծագործական ու նորարար գաղափարներով և էնտուզիազմով լի ուսանող:

Եվ այսպես, եթե մոտիվացված ու նպատակասլաց ես, համապատասխանում ես վերոնշյալ չափանիշներին և քեզ տեսնում ես այս ոլորտում, ապա օգտագործի՛ր հնարավորությունդ առաջին քայլն անելու՝ միանալով IDBank-ի թիմին:

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել «ԱյԴի Բանկ»-ի դիմում-հայտը և/կամ ինքնակենսագրականի (CV) հետ միասին ուղարկել hr@idbank.am հասցեին՝ նամակի թեմա (subject) դաշտում պարտադիր նշելով ծրագրի անվանումը՝ «ԿԱՌՈՒՑԻՐԿԱՐԻԵՐԱԴԱՅԴԻԲԱՆԿԻՀԵՏ» :
Նշենք նաև, որ ստացված յուրաքանչյուր դիմում-հայտ մանրամասն կուսումնասիրվի ՄՌԿ վարչության կողմից, և հաշվի առնելով դիմորդի համապատասխանությունը Ծրագրի պահանջներին՝ ընտրված թեկնածուները կհրավիրվեն թեստավորման և հարցազրույցի:

կառուցիրկարիերադԱյԴիԲանկիհետ
#միացիրԱյԴիԲանկին
#արիԱյԴիԲանկ
#ԱյԴիԲանկթիմ